ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 18

ք. Գյումրի «29» «հունվարի» 2026 թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա.Մելքոնյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 1910-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան

1. Պայմանագրով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանապետության օրենքի 09 բաժնի 05 խմբի 01 դասի 1198 Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագրի ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին տրամադրման կարգը, որի շրջանակներում Կատարողը ստանձնում է իրականացնել 11005 Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում միջոցառումը՝ տարեկան 8 /ութ/ աշակերտի համար (որից 8/ութ/ ազգային, 0 լարային, 0 փողային նվագարանների բաժիններում), իսկ Պատվիրատուն պարտավորվում է բյուջեից հատկացված գումարի շրջանակներում Կատարողին տրամադրել 1743100 /մեկ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Ծառայության ընդհանուր նկարագրությունը ներկայացված է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Հավելված 1»-ում սահմանված Տեխնիկական բնութագրով:

Կողմերի իրավունքները և պարտականությունները

3. Պատվիրատուն իրավունք ունի.

1) Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2) Պահանջել Կատարողից Պայմանագրով սահմանված ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

4. Պատվիրատուն պարտավոր է.

1) Պայմանագրի շրջանակներում աջակցել Կատարողին.

5. Կատարողն իրավունք ունի.

1) Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը:

6. Կատարողը պարտավոր է.

1) Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2) Ծառայությունը մատուցել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3) Կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

4) Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծառայության իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման կարգը և ժամկետները

7. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության չափը կազմում է 1743100 /մեկ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

8. Կատարողը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը Պատվիրատուին է ներկայացնում տվյալ եռամսյակում մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտը (երկու օրինակից), իսկ 4-րդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 25-ը:

9. Պատվիրատուն հանձնման-ընդունման ակտը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը: Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

10. Պատվիրատուն վճարումներն իրականացնում է համամասնորեն՝ ամսական կտրվածքով, անկանխիկ՝ դրամական միջոցները մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Հավելված 2»-ում սահմանված վճարման ժամանակացույցի:

Կողմերի պատասխանատվությունը

11. Պայմանագրով հատկացված գումարի շրջանակներում Կատարողի կողմից աշխատանքների և ծառայությունների գնումները պետք է իրականացվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

12. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կարարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կատարողին վճարվելիք գումարներից:

13. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պայմանագրի գործողության ժամկետը

14. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

15. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

Եզրափակիչ դրույթներ

16. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

17. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, բաղկացած է 2 էջից և 3 հավելվածից՝ «Հավելված 1» 1 էջ, «Հավելված 2» 1 էջ, «Հավելված 3» 1 էջ, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900211270013	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900228000148
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05900119
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝
Ա. Աբրահամյան	Ա.Մելքոնյան
Կ.Տ.	Կ.Տ.

«Հավելված N 1
2026 թ. «հունվարի» «29» կնքված
Թիվ 18 պայմանագրի»

2026 թվականին մատուցվող ծառայությունների ընդհանուր նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
«Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցումը կազմակերպվում է քաղաքացիների մտավոր, հոգևոր և մշակութային ընդունակությունների դրսևորման, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

Ուսումնական գործընթացը նպատակաուղղվում է նաև սովորողների կողմից ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացմանը, անհատի բազմակողմանի զարգացմանը, նրանց առողջության պահպանմանը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է՝ առաջնորդվելով ՀՀ մշակույթի նախարարության ուսումնական հաստատությունների տիպային ուսումնական պլաններով:

Կատարողը ապահովում է երեխայի ընդհանուր զարգացումը՝ հոգևոր մշակութային հմտությունների և կարողությունների, բարեկիրթ խոսքի ու վարվելաձևի, ինքնավերահսկման պարզագույն հմտությունների, անձնական հիգիենայի և առողջ կենցաղի հիմունքների տիրապետումը:

Երաժշտական կրթությունն ավարտվում է պետական քննություններով:

Շրջանավարտներին սահմանված կարգով տրվում է հիմնական կրթության վկայական:

Ներկայացվող պահանջներն են՝

- պետական չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի ապահովում,
- մասնագետ կադրերով ապահովվածություն,
- գործող չափորոշիչների շրջանակներում նյութատեխնիկական բազայի առկայություն, որն անհրաժեշտ է կրթական գործունեության և այդ բնագավառի այլ խնդիրների լուծման համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900211270013	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900228000148
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05900119
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝
Ա. Աբրահամյան	Ա.Մելքոնյան

Կ.S. Կ.S.

«Հավելված N 2
2026 թ. «հունվարի» «29» կնքված
Թիվ 18 պայմանագրի»

2026 թվականի համար սահմանված ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
«Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն

	Անվանումը՝ «Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում»

		քանակը	գումարը /դրամ/
Քանակական	Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման փոխհատուցում ստացող աշակերտների քանակը	8	18 157
	Ազգային նվագարանների բաժնում սովորող աշակերտների քանակը	8	
	Գործիքը /քանոն, թառ/	8	
	Հաշվետու համերգների քանակը	2	
	Մեկ աշակերտի ուսման համար ամսական փոխհատուցման չափը	8	18 157
Տրամադրվող դրամաշնորհի չափը			**1743100**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900211270013	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900228000148
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05900119
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ գլխավոր քարտուղար՝	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝
Ա. Աբրահամյան	Ա.Մելքոնյան

Կ.Տ

Կ.Տ

«Հավելված 3
2026 թ. «հունվարի» «29» կնքված
Թիվ 18 պայմանագրի»

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
«Ամասիայի մանկական արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության

2026 թվականի գումարների վճարման ժամանակացույցն ըստ ամսական բացվածքի՝

N	Ամիսը	Գումարը (հազ.դրամ)
1.	Հունվար	0,0
2.	Փետրվար	215,7
3.	Մարտ	215,7
4.	Ապրիլ	149,9
5.	Մայիս	139,8
6.	Հունիս	160,0
7.	Հուլիս	419,5
8.	Օգոստոս	0,0
9.	Սեպտեմբեր	209,8
10.	Հոկտեմբեր	77,6
11.	Նոյեմբեր	77,5
12.	Դեկտեմբեր	77,6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900211270013	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900228000148
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05900119
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝	ՀՀ Շիրակի մարզի «Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝
Ա. Աբրահամյան	Ա.Մելքոնյան
Կ.Տ	Կ.Տ